

ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏՅԷԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն
Սրահ՝ POplar 9-9230
Հովիտի Իրասնեակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ



S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES
Hall: POplar 9-9230
Pastor's office: POplar 3-6807
Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

Նոյեմբեր 24, 1964

Գերաշնորհ

Տ. Սիոն Սրբ. Արքեպս. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի,

Նիւ Եորք

Գերաշնորհ եւ Սիրելի Սրբազան Հայր,

Ինչպէս ներփակ ծանուցագիրը կը յայտնէ, անցեալ կիրակի, Նոյեմբերի 22ին ունեցանք բացառիկ Անդամական Ժողով մը մեր նախագահութեան ներքեւ, որուն գլխաւոր օրակարգը պիտի ըլլար մեր ներկայ եկեղեցին ծախելու վերջնական եւ օրինական հաւանութիւն ստանալ մեր անդամներէն:


Ուրախ եմ յայտնելու, Սրբազան Հայր, որ բացառապէս թիւով եւ որակով լաւ ժողով մըն էր տեղի ունեցածը: Մասնաւոր ջանք թափեցինք մեր տրատու անդամներուն կէսէն աւելին ապահովել որ ներկայ ըլլան: Ունեցանք 125 տրատու անդամներու ներկայութիւնը եւ առինք հետեւեալ երկու կենսական եւ վերջնական որոշումները.-

1.- Համաձայն պատրաստուած պայմանագրութեան, մեր ներկայ եկեղեցին ծախել 'Ֆլորսդ Թիմթի Պէքզիստէ' Եկեղեցիին 45,000.00 տոլարի: Գումարը կանխիկ պիտի վճարուի մեր եկեղեցին ձգած օրը. իսկ անմիջապէս 5,000.00 տոլարի կանխավճար մը պիտի տրուի մեզի: Եկեղեցիէն դուրս պէտք է ելլենք Յունիս 15ին -1965-: Մոյն պայմանագրութիւնը ստորագրեցինք ժողովուրդի ներկայութեան, իրենց միաձայն հաւանութենէն ետք:

X 2.- Շինութեան Յանձնախումբի վերջնագոյն տեղեկագիրը ներկայացուց նորընտիր Ատենապետ Պրն. Սուրէն Բարեջանեան, եւ թեւադրեց ժողովին որ տայ իր վերջնական համաձայնութիւնն ու արտօնութիւնը որ անմիջապէս սկսին Եկեղեցւոյ եւ տակի դպրոցի բաժինները, որոնց համար երեք հարիւր քսան հինգ հազարի գումար մը նախատեսուած է: Ժողովուրդը խանդավառութեամբ եւ միաձայնութեամբ ամէն իրաւասութիւն տուաւ Յանձնախումբին իրենց լաւագոյնը ընել ու նուազագոյն գումարով շէնքերը կառուցանել: Կառուցումներու սկսելէն մինչեւ վեց ամիս պիտի կարենանք որոշել թէ սրահն ալ միեւնոյն ժամանակ պիտի կարենանք շինել թէ ոչ. եթէ ոչ զայն պիտի յետաձգենք մի քանի տարիով:

Կը տեսնէք, Սրբազան Հայր, որ ամենէն գործնական եւ իմաստալից քայլը նոր է որ աւանդեցաւ, որուն համար ուրախ ենք բոլորս: Ասոր մէջ Ձեր անձնական ներկայութիւնն ու ազդու թեւադրութիւնները մեծ դեր կատարեցին անտարակոյս: Վստահ եմ դուք եւս ուրախ պիտի ըլլաք եւ քաջալերէք:

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.



Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES

Hall: POplar 9-9230

Pastor's office: POplar 3-6807

Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Եկեղեցւոյ Հեռաձայն
Մրահ՝ POplar 9-9230
Հովիտի Կրասնենակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրդ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ

Եր մնայ մէկ բան: Ինչպէս պէտք է մեր այս ծրագիրը թեմական Ժողովին
բերել առնելու համար Ձեր հաւանութիւնը եւս: Այս մէկը անհրաժեշտ ձեւա-
կերպութիւն մըն է եւ կը փափաքիմ յարմար կերպով կատարել: Ինծի կը հա-
ճի՞ք թեւադրել թէ անձամբ գալու եմ եւ բերելու հետս շէնքերուն յատա-
կագիծներն ու մանրամասնեալ հաշիւները: Շատ փափաքեւի է որ այս ալ
շուտով ընենք որպէսզի օրերու յարմարագոյն շրջանին կառուցման աշխա-
տանքները սկսին:

Եր ներփակեմ նոր շէնքերու նախապատրաստուած պատկերը եւ կը մատչիմ
Ձեր Աջին որդիական սիրով

աղօթակից

Zaven Arzoumanian

Զաւէն Վրդ. Արզումանեան, Հովիւ

November 23, 1964

Armenian Church Diocese Of North America
630 Second Avenue
New York 16, N.Y.

Att: His Eminence Archbishop Sion Manoogian

Dear Archbishop Manoogian:

Please be advised that a membership meeting of the Holy Trinity Armenian Apostolic Church of North Philadelphia was held on the 22nd day of November. This meeting was declared constitutional by the trustees and concerned itself with the sale of our church.

I feel it is my duty to herein state that a legal majority was not present at this meeting and that it could not therefore transact any official business, as such I hereby protest the actions and decisions of this meeting and ask you as the leader of the North American Diocese of the Armenian Church to concern yourself with the above matter.

Yours very truly



Alishan Haigazian

4801 Springfield Avenue
Philadelphia, Pa. 19143

November 25, 1964


The Most Rev. Archbishop Sion Manoogian
Primate of the Diocese of the Armenian
Church of North America
New York, N.Y.

Dear Archbishop Sion Manoogian:

I, as member of the Holy Trinity Church of Philadelphia,
would like to protest to you that the membership meeting held
at our Church Sunday, November 22, 1964, was not legal.

Majority of our membership was not in attendance.

Sincerely,

A handwritten signature in cursive script that reads "Mary Parnagian". The signature is written in dark ink and is positioned above the printed name.

Mrs. Mary Parnagian

ՍԲ. ԵՐՈՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏՆԻՖԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հետամայն
Սրահ՝ POplar 9-9230
Հովիտի Իրասնեակ՝ POplar 3-6807

Տ. Զաւեն Արզ. Արզումանեան
Հոգեւոր Հովիւ



Holy Trinity
Armenian Apostolic Church
North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES
Hall: POplar 9-9230
Pastor's office: POplar 3-6807
Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

MEMORANDUM

ATTENTION: Primate & Diocesan Council

NORTH PHILADELPHIA PARISH BUILDS NEW CHURCH AND AUDITORIUM

On October 25, 1964, the Primate of the Armenian Church presided over the membership meeting to discuss the final specifications of the new Church, Sunday School and Auditorium to be built on the property located in Cheltenham Township. As the picture shows, it will be an Armenian authentic architecture designed by the Kuljian Corporation.

At the meeting, the Financial report was read by the Assistant Treasurer, Mr. Harry Mirijanian. The Bid Committee Report was given by Mr. Sooren Paretchianian, the Chairman of the Building Committee, who assured the membership that the entire project as of December 1964 will cost not more than \$400,000.00.

Mr. John Samuelian, the Architect gave further specifications about the buildings and expenses. The Real Estate Committee Chairman, Mr. Arsen Kashkashian assured that our present Church located on Marshall and Susquehanna Avenue is ready to be sold to the First Timothy Methodist Church for \$45,000.00, payable cash at our departure.


At the closing of the meeting, the Primate gave his suggestions and stressed that the buildings should be ready very soon, and he gave his blessings.

On November 22, 1964, a special membership meeting was summoned by our Pastor Very Rev. Zaven Arzoumanian to secure the final approval of the membership concerning both the sale of the Church and the cost of our new project. The Chairman of the Parish Council, Mr. Sarkis Manoogian, conducted the meeting during which two essential and practical decisions were taken unanimously by the quorum which represented the

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
Ն. ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ՓԱ.

Եկեղեցւոյ Հեռաձայն
Սրահ՝ POplar 9-9230
Հովիտի Կրասնենակ՝ POplar 3-6807

Տ. Զաւէն Վրոյ Արզումանեան
Հոգեւոր Հովիւ



S. W. Corner

Susquehanna Avenue & Marshall Street

Holy Trinity
Armenian Apostolic Church

North Philadelphia 22, Pa.

CHURCH PHONES

Hall: POplar 9-9230
Pastor's office: POplar 3-6807

Very Rev. Zaven Arzoumanian
Pastor

Page 2

majority of our dues paying membership. The contract of our Church sale was approved by the membership and signed by the Pastor and Parish Council.

The Chairman of the Building Committee, Mr. Sooren Paretchianian, reported about the recent decision regarding the bids and asked the approval of the membership to begin the \$325,000.00 project which will include the Armenian architecture Church and the Sunday School classes underneath. He also expressed the wish that the building of the auditorium will follow as soon as we can afford the additional \$75,000.00 amount.

Թիւ 11632
Նոյեմբեր 30, 1964

Հոգեշնորհ
Տ. Զաւէն Վրդ. Արզու անեան
Հոգեւոր Հովիւ Ս. Մրրորդութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Մխկան Խորհուրդի
Նորթ Գիլատել Գիւ.

Սիրելի Հայր Զաւէն,

Ատացած ենք Ձեր Նոյեմբեր 24 թուակիր նամակը, որով կը հաղորդէք
թէ Ձեր եկեղեցւոյ Մխկան Անդամական Ժողովը՝ գումարուած Նոյեմբեր 22ի
Կիրակի օր, որոշած է ծախել Ձեր եկեղեցւոյ շէնքը, եւ կը խնդրէք հաստա-
տել ու վաւերացնել սոյն որոշումը:

Սակայն, նկատելով որ անդամական Ժողովը մեծամասնութիւն չէ ու-
նեցած, ըստ Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան, եւ Ձեր Թուխի ան-
դամներէն ոմանք գրաւոր բողոք ներկայացուցած են մեզի, առարկելով թէ այդ
Ժողովը մեծամասնութիւն չէր գոյացներ, եւ հետեւաբար օրինաւոր չէր. այ-
սու կը հաղորդենք Ձեր սիրելութեան թէ Նոյեմբեր 22ի Ձեր անդամական Ժո-
ղովը օրինաւոր չէր եւ իրաւունք չունէր եկեղեցւոյ շէնքը ծախելու որո-
շումը տալ:

Ուստի, կը հրահանգենք որ յառաջիկային Նոր անդամական Ժողով
գումարէք եւ ըստ Թեմական Կանոնադրութեան մեծամասնութեան ներկայու-
թեամբ որոշում տաք եկեղեցւոյ շէնքի վաճառման համար:

Հաղորդելով զայս առ ի գործադրութիւն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՍՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի